ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

02.10.2023 18:06

2023թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի, Արցախի փաստաբանական դպրոցի տնօրենի, Արցախի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, արցախցի փաստաբանների և այլ ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կողմերը քննարկել են արցախցի փաստաբաններին աշխատանքով ապահովելու հետ կապված հարցերը, հաշվի առնելով, որ 20-ից ավելի փաստաբանական գրասենյակներ պատրաստակամություն են հայտնել արցախցի փաստաբաններին ընդունել աշխատանքի:

Փաստաբանների պալատը և Փաստաբանական ակադեմիան ապահովելու են Արցախի փաստաբանների պալատի նախագահին, Արցախի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին և Փաստաբանական դպրոցի տնօրենին աշխատանքային պայմաններով:

Փաստաբանների պալատը աշխատասեղաններ է տրամադրում արցախցի փաստաբաններին՝ ապահովելով նյութատեխնիկական միջոցներով:

Փաստաբանների պալատում ստեղծված աշխատանքային խումբը՝ ֆինանսական տնօրենի գլխավորությամբ օժանդակում է արցախցի փաստաբաններին կացարաններ որոնելու հարցերում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })